

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ  
ԾՐԱԳԻՐ  
2016-2020 ԹԹ.

ԶԵԿՈՒՅՑ 2015/2016 ՈՒՍՏԱՐՎԱ ԵՐԿՐՈՐԴ  
ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ  
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	5
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....	6
I. Որակյալ կրթություն.....	6
II. Արդիական հետազոտություն և նորարարություն .....	14
III. Հանրային ներգրավում և ծառայություններ.....	19
IV. Որակյալ մարդկային ռեսուրսներ .....	26
V. Որակյալ ենթակառուցվածքներ .....	29
VI. Որակյալ ծառայություններ.....	35
VII. Ընդունելության բազմազանեցում և համապատասխանություն.....	42
VIII. Ֆինանսական կայունություն, արդյունավետ կառավարում .....	48
IX. Միջազգայնացում և գործակցություն .....	55



## ՆԱԽԱԲԱՆ

ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը (ՌԾ) մեկնարկել է 2016 թ. հունվարին: ՌԾ-ով նախատեսված է 9 ռազմավարական նպատակների իրականացման համար հնգամյա ժամանակահատվածում լուծել 27 խնդիր, որոնք նպատակաուղղված են ԵՊՀ-ում որակյալ կրթության ապահովմանը, արդիական բարձրակարգ հետազոտությունների և նորարարությունների իրականացմանը, հանրային ներգրավման և ծառայությունների զարգացմանը, որակյալ մարդկային ռեսուրսների կատարելագործմանը, որակյալ ենթակառուցվածքների ստեղծմանն ու բարելավմանը, որակյալ ծառայությունների տրամադրմանը, ընդունելության բազմազանեցման ընդլայնմանը և համապատասխանության բարձրացմանը, ֆինանսական կայունությանն ու կառավարման արդյունավետության բարձրացմանը, ռազմավարական գործակցության ամրապնդմանն ու գործունեության միջազգայնացման խթանմանը: ՌԾ իրականացման ժամանակացույց-պլանով սահմանվել են այդ խնդիրների համապատասխան գործողությունների կատարման ժամկետները՝ ըստ ուսումնական տարիների և կիսամյակների, ինչպես նաև կատարման պատասխանատուները, պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսները և ակնկալվող արդյունքները:

Ըստ ՌԾ իրականացման ժամանակացույց-պլանի՝ նախատեսված է 2015/2016 ուստարվա երկրորդ կիսամյակում իրագործել Ռազմավարական ծրագրի նպատակների մի շարք խնդիրներ:

Ստորև ներկայացվում է այդ խնդիրների իրականացման առաջընթացը՝ համապատասխան գործողությունների և միջոցառումների կատարողականով:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ  
ԳՆԱՀԱՏՈՒՄ

I. ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

*Տրամադրել աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ բարձրորակ կրթական ծրագրեր՝ միտված շրջանավարտների աշխատանքային գործունակության բարելավմանը, բարձրացնել ուսանողների բավարարվածության մակարդակը ԵՊՀ-ում ստացած կրթությունից:*

Ռազմավարական 1-ին՝ «Որակյալ կրթություն» նպատակի *Խնդիր 1.1*-ով սահմանված է. «*Իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում՝ որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ*»:

Այս խնդրի *1-ին գործողությամբ* նախատեսված է. «*Վերանայել մագիստրոսի և բակալավրի կրթական ծրագրերի կառուցվածքը և բովանդակությունը սահմանող նորմատիվ փաստաթղթերը (առկա և հեռակա ուսուցման համակարգերի համար)*»: Սահմանված ժամկետում այս ուղղությամբ իրականացվել է զգալի աշխատանք: ԵՊՀ ոեկտորի հրամանով ստեղծված աշխատանքային խումբը քննարկել, վերանայել և լրամշակել է առկա և հեռակա ուսուցման համակարգերի մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը սահմանող նորմատիվ փաստաթղթերը, որոնք ընդհանրացվել են մեկ միաս-

նական փաստաթղթում: Այն հաստատվել է ԵՊՀ գիտական խորհրդի 2016 թ. հուլիսի 7-ի նիստում:

Նշված փաստաթուղթը էականորեն տարբերվում է նախորդներից: Մասնավորապես՝ ամբողջությամբ նորացվել է ընդհանուր դասընթացների կրթամասը, մեծացվել է օտար լեզվի դասընթացների ժամաքանակը, ներմուծվել է նոր՝ «Հետազոտության պլանավորում և մեթոդներ» դասընթացը: Ներմուծվել է մասնագիտական դասընթացների նոր կրթամաս՝ 15 կրեդիտ ծավալով, որն ընդհանուր է տվյալ մասնագիտության շրջանակներում գործող բոլոր մագիստրոսական ծրագրերի համար:

Զգալիորեն ընդլայնվել է նաև մասնագիտացման կամընտրական դասընթացների առաջարկվող ցանկը, սահմանվել է գիտական սեմինարի նոր ձևաչափ, որի նպատակն է ապագա հետազոտողների մեջ ձևավորել գիտական հետազոտություններ կատարելու և դրանց արդյունքները մասնագիտական լսարանին ներկայացնելու հմտություններ:

Էապես արժևորվել է մագիստրոսական թեզի նշանակությունը, որի աշխատածավալը մեծացվել է մինչև 27 կրեդիտ: Հստակեցվել է ծրագրի կառուցվածքը, մասնավորապես՝ բոլոր ընդհանուր դասընթացները, որոնք ուղղված չեն մասնագիտացմանը, իրականացվում են 1-ին կիսամյակում, 2-րդ կիսամյակն ամբողջությամբ տրամադրվում է մասնագիտացման պարտադիր դասընթացներին, իսկ 3-րդը՝ միայն մասնագիտացման ընտրովի դասընթացներին, ինչը հնարավորություն է տալիս ուսանողների համար ձևավորելու ակադեմիական շարժունության «պատուհան»:

Զգալիորեն նվազեցվել է նաև ուսումնական մոդուլների ընդհանուր քանակը (իջեցվել է մինչև 23)՝ դրանով իսկ վերացնելով գործող ուսումնական ծրագրերի մասնատվածությունը:

Մշակված «Երևանի պետական համալսարանում մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգ»-ն ուղարկվել է ֆակուլտետներ և կրթական կենտրոններ՝ քննարկման և առաջարկությունների ստացման համար, և այժմ գտնվում է ԳԽ-ի հաստատման փուլում:

Աշխատանքներ են տարվել նաև «Երևանի պետական համալսարանի բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» փաստաթղթի լրամշակման ուղղությամբ, որի վերջնականացման գործընթացը հետաձգվել է՝ կապված «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ նոր օրենքում բակալավրի ծրագրի բովանդակության անհրաժեշտ նվազագույնի պահանջների փոփոխության հետ: Ինչպես մագիստրոսական ծրագրերի պարագայում, բակալավրական ծրագրերի համար ևս նախատեսված են դրանց համապատասխանեցում 2016 թ. հուլիսին ՀՀ կառավարության կողմից հաստատված «Բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակ»-ին և կրթական վերջնարդյունքների հիմքի վրա դրանց վերանայում:

***Խնդիր 1.2-ով սահմանված է. «Բարելավել դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացները»:***

Այս խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. «*Զարգացնել մանկավարժական առաջավոր փորձի խրախուսման և տարածման ներհամալսարանական մեխանիզմները, նպաստել ուսուցման ժամա-*



*նակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը*»: Այս գործողությունն արդեն ընթացքի մեջ է, որոշ քայլեր ձեռնարկվել են, մասնավորապես՝ մշակվել և ԵՊՀ գիտխորհրդի կողմից հաստատվել է «Երևանի պետական համալսարանի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը», որով նաև սահմանվում է, որ Համալսարանի հիմնական աշխատողներին լրավճար վճարվում է ԵՊՀ ֆակուլտետի գիտական խորհրդով երաշխավորված դասախոսությունների կամ ուսումնական (ուսումնամեթոդական) ձեռնարկի՝ ԵՊՀ համացանցային պորտալում տեղադրման դեպքում: Ըստ Կարգի՝ Համալսարանի դասախոսներին (բացառությամբ ժամավճարային հիմունքներով աշխատող դասախոսների) լրավճար է վճարվում նաև ուսանողական հարցման արդյունքներով անցկացվող մրցույթի արդյունքներով:

Խնդիր 1.2-ի 4-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ուսումնասիրել դասավանդման, ուսումնասրության և հետազոտության ինտեգրման (փոխկապակցման) ժամանակակից փորձը՝ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում կիրառելու նպատակով*»: Այս ուղղությամբ նույնպես արդեն որոշակի քայլեր են արվել. ստեղծվել են մի շարք Start-Up լաբորատորիաներ: Մագիստրոսի կրթական ծրագրում նախատեսված «Հետազոտության պլանավորում և մեթոդներ» դասընթացը նույնպես ուղղված է այս գործողության իրականացմանը:

Խնդիր 1.2-ի 5-րդ գործողությամբ նախատեսված է. *«Մշակել և ներդնել ակադեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմներ, այդ թվում՝ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի (ատենախոսությունների) գրազոդությունը կանխելու նպատակով*»:

Այս գործողությունը մեկնարկել և իրականացման ընթացքում է: Կատարված քայլերից է, մասնավորապես, մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման նոր կարգի մշակումը, որը նախատեսում է գրագողությունը կանխելու միջոցառումներ և մագիստրոսական թեզի էլեկտրոնային տարբերակի տեղակայում թեզերի առցանց շտեմարանում՝ «Ուսանող-Համալսարան» վիրտուալ պլատֆորմի միջոցով: Այս կապակցությամբ հրապարակվել է ԵՊՀ ռեկտորի հրամանը, ըստ որի՝ 2016/2017 ուսումնական տարվանից սկսած՝ մագիստրանտներն իրենց մագիստրոսական թեզերը, ամբիոններում նախնական պաշտպանությունը կատարելուց հետո՝ թեզերի պաշտպանության օրվանից առնվազն 7 օր առաջ, պարտավոր են առցանց եղանակով պաշտոնապես ներկայացնել պաշտպանության:

***Խնդիր 1.3-ով սահմանված է. «Բարձրացնել որակի ներքին ապահովման համակարգի կառույցների գործունեության արդյունավետությունը»:***

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. «Գործադրել դասընթացների և կրթական ծրագրերի գնահատման առցանց համակարգը»: Թեև այս գործողությունը ըստ Ժամանակացույց-պլանի մեկնարկում է 2016 թ. սեպտեմբերից, սակայն դրա կատարումը նախորդ ուստարում արդեն իսկ մեկնարկել է և ընթացքի մեջ է:

Սահմանված ժամկետում ձեռնարկվել է նաև նշված խնդրի 6-րդ գործողության իրականացումը՝ «Նախապատրաստել և առցանց եղանակով իրականացնել ԵՊՀ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումները, ինչպես նաև

*ԵՊՀ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցումները*»: Նախատեսված ժամանակահատվածում որակի ապահովման ներքին համակարգի կառույցների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով ավարտվել են աշխատանքները հեռակա ուսուցման համակարգում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումները պիլոտային կարգով առցանց եղանակով կազմակերպելու ուղղությամբ, և այժմ այդ փորձը տարածվում է բոլոր ֆակուլտետներում:

Ընթացքի մեջ են աշխատանքները առկա ուսուցման համակարգում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումները, ինչպես նաև առկա և հեռակա ուսուցման համակարգերում ԵՊՀ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցումները ևս առցանց եղանակով կազմակերպելու ուղղությամբ, որոնց իրականացումը նախատեսվում է 2016/2017 ուստարվանից:

***Խնդիր 1.4-ով սահմանված է. «Ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը կրթական գործընթացում»:***

Այս խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. «Ներդնել և շահագործել վեբ-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգ՝ ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների առցանց մատուցման համար», որի շրջանակներում իրականացվել է առցանց եղանակով «Էլեկտրոնայի և բնության պահպանության հիմունքներ» համահամալ-

սարանական դասընթացի մատուցման (դասավանդման) և գիտելիքների գնահատման տեխնիկական ապահովումը (առցանց դասընթացի համակարգում ուսանողների գրանցում, էլեկտրոնային փոստով տեխնիկական աջակցության տրամադրում, գիտելիքների ստուգման առցանց համակարգի անվտանգության ապահովում և այլն):

Խնդիր 1.4-ի 2-րդ և 6-րդ գործողություններով նախատեսված՝ աշխատանքներ են տարվել ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների մշակման և ներդրման համար անհրաժեշտ տեխնոլոգիական և մեթոդական հենք ձևավորելու, ինչպես նաև հեռակա ուսուցման դասընթացները համապատասխան էլեկտրոնային ռեսուրսներով ապահովելու ուղղությամբ:

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. «Ներդնել խրախուսման մեխանիզմներ՝ դասավանդման գործընթացում ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների կիրառման համար»: Այս գործողության իրականացմանն է ուղղված ԵՊՀ գիտական խորհրդի 2016 թ. մայիսի 26-ի թիվ N 7/2 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարանի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը», որի համաձայն՝ ԵՊՀ աշխատողներին լրավճարը վճարվում է գիտահետազոտական, ուսումնամեթոդական, կազմակերպչական աշխատանքների որոշ տեսակների կատարման համար: Մասնավորապես, ըստ փաստաթղթի 2-րդ՝ «Ուսումնամեթոդական գործունեության որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման կարգը» կետի 2.1. ենթակետում ներկայացված աղյուսակի 1-ին կետի՝ Համալսարանի հիմնական աշխատողներին լրավճար վճարվում է ԵՊՀ ֆակուլտե-

տի գիտական խորհրդով երաշխավորված դասախոսությունների կամ ուսումնական (ուսումնամեթոդական) ձեռնարկի՝ ԵՊՀ համացանցային պորտալում տեղադրման համար:

Նշված խնդրի 7-րդ գործողությամբ նախատեսված է. *«Կանոնակարգել և ընդլայնել առցանց եղանակով իրականացվող դասընթացները»*: Հաշվետու ժամանակահատվածում նախատեսված է միայն կանոնակարգման գործընթացի իրականացում, ինչն արվել է՝ համաձայն ԵՊՀ ռեկտորի՝ «Երևանի պետական համալսարանում առարկայական դասընթացների ուսուցանումը և գիտելիքների գնահատումը առցանց եղանակով կազմակերպելու կարգի մասին» հրամանի (հր. N 86Տ40, 16.05.2016 թ.): Հիշյալ գործողության հետագա իրականացումը պայմանավորված է ուսումնական գործընթացի կազմակերպման կարգում փոփոխությունների կատարմամբ:

## II. ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

*Ընդլայնել դասախոսական կազմի և ուսանողների ներգրավումը հետազոտական աշխատանքներում, նպաստել ակադեմիական համագործակցության ընդլայնմանը և հետազոտական աշխատանքների միջազգայնացմանը, համապատասխանեցնել ասպիրանտական կրթության չափանիշները համաեվրոպական պահանջներին:*

Ռեզոլուցիայի 2-րդ՝ «Արդիական հետազոտություն և նորարարություն» նպատակի *Խնդիր 2.1*-ով սահմանված է. «*Նպաստել հետազոտությունների ծավալի մեծացմանը և հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և սովորողների ներգրավվածության ընդլայնմանը*»:

Համաձայն սահմանված ժամկետի՝ իրականացվել կամ սկսվել և ընթացքի մեջ են մի շարք գործողություններ: Մասնավորապես՝ խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. «*Մշակել և ներդնել համապատասխան մեխանիզմներ՝ ազդեցության գործակցով ամսագրերում հոդվածների հրապարակումները խրախուսելու համար*»: Ի կատարումն այս գործողության՝ ազդեցության գործակցով ամսագրերում հոդվածների հրապարակումները խրախուսելու համար մշակվել և 2017 թվականի սեպտեմբերից կներդրվի վերը հիշատակված՝ ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը: Համաձայն այդ կարգի 1.1. կետի՝ ազդեցության գործակցով ամսագրերում հոդված տպագրե-

լու համար հողվածի ԵՊՀ աշխատող-հեղինակները կստանան լրավճար:

Խնդիր 2.1-ի *3-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Ապահովել գիտահետազոտական ծրագրերում ասպիրանտների և մագիստրանտների մասնակցությունը»*: Ըստ այդմ, համաձայն լրավճարների վճարման մասին նոր կարգում սահմանված կետերի՝ մշակվել են մեխանիզմներ, որոնք կշահագրգռեն ղեկավարներին՝ ընդլայնելու ասպիրանտների և մագիստրանտների մասնակցությունը գիտահետազոտական ծրագրերում:

*4-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Խրախուսել ՈւԳԸ շրջանակներում ուսանողների գիտահետազոտական աշխատանքների ղեկավարումը»*: ՈւԳԸ գիտական ղեկավարումը և ՈւԳԸ գիտական հողվածների ժողովածուում տպագրված աշխատանքների ղեկավարումը խրախուսելու նպատակով վերոնշյալ կարգում ներառվել են կետեր, որոնցով նշված աշխատանքների համար նախատեսվում են լրավճարներ:

Խնդրի *6-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Ստեղծել Start-Up լաբորատորիաներ՝ բնագիտական ֆակուլտետների մագիստրատուրայում և ասպիրանտուրայում նորարարական հետազոտությունները խթանելու նպատակով»*: Այս ուղղությամբ ստեղծվել է Ֆիզիկատեխնիկական հետազոտությունների կենտրոն, որը ներառում է 3 Start-Up լաբորատորիա:

*Խնդիր 2.2-ով* սահմանված է. *«Զարգացնել հետազոտական համագործակցությունը հանրապետության գիտահետազոտական ինս-*

*տիտուսների, բուհերի և ձեռնարկությունների հետ»,* որի իրականացմանը միտված 3 գործողությունների ուղղությամբ կատարվել են որոշակի աշխատանքներ:

Խնդրի *1-ին գործողության* համաձայն՝ մագիստրանտների և ասպիրանտների հետազոտական աշխատանքների ղեկավարման գործում ներգրավված են հանրապետության առաջատար գիտաշխատողներ տարբեր գիտահետազոտական կազմակերպություններից:

*2-րդ գործողությամբ* նախատեսված է. «*Աջակցել գիտահետազոտական կենտրոնների հետ համատեղ ծրագրերի իրականացմանը*»: Այս գործողությամբ թելադրված՝ գիտահետազոտական կենտրոնների հետ համատեղ ծրագրերի իրականացման և առհասարակ գիտատեխնիկական ու նորարարության բնագավառներում համագործակցության նպատակով ԵՊՀ-ի և ՌԴ Հարավային դաշնային համալսարանի միջև կնքվել է համաձայնագիր, որի շրջանակներում հայտարարվել է գիտական համատեղ նախագծերի աջակցության մրցույթ 5 մասնագիտություններով:

*3-րդ գործողությամբ* նախատեսված է. «*Նպաստել ձեռնարկությունների մասնակցությամբ հետազոտական և կրթական ծրագրերի իրականացմանը*»: Այս առումով, բացի որոշ ձեռնարկությունների հետ շարունակական բնույթ կրող կրթական ծրագրերի իրականացումից՝ Start-Up լաբորատորիաների ստեղծումը հետաքրքրություն է առաջացրել նաև մի շարք այլ ձեռնարկությունների շրջանում՝ իրականացնելու համատեղ նոր հետազոտական և կրթական ծրագրեր:



***Խնդիր 2.3***-ով սահմանված է. **«Խթանել Համալսարանի հետազոտական գործունեության միջազգայնացումը»**, որի իրագործման համար նախատեսված է 5 գործողություն:

Նշված խնդրի **4-րդ գործողությամբ** նախատեսված է. **«Շարունակել կազմակերպել միջազգային գիտաժողովներ, օժանդակել արտասահմանյան գիտաժողովներին ԵՊՀ աշխատողների մասնակցությամբ»**: Ըստ այս գործողության՝ ԵՊՀ-ն շարունակել է կազմակերպել միջազգային գիտաժողովներ և դրանց օժանդակելու համար մշակել է դրամական աջակցություն տրամադրելու կարգ:

Խնդրի **5-րդ գործողությամբ** նախատեսված է. **«Աջակցել արտասահմանյան գործընկերների հետ համագործակցության շարունակականությանն ու խորացմանը»**: Այս գործողության համաձայն՝ աճել է արտասահմանյան գործընկեր կազմակերպություններ ԵՊՀ աշխատողների գործուղումների թիվը, ինչը վկայում է համագործակցության շարունակականության և խորացման մասին:

***Խնդիր 2.4***-ով սահմանված է. **«Համալսարանում բարձրագույն կրթության 3-րդ աստիճանի չափանիշները համապատասխանեցնել Ջալգրուրգյան սկզբունքներին»**, որի իրականացման համար սահմանված է 4 գործողություն:

Խնդրի **1-ին գործողությամբ** նախատեսված է. **«Կատարելագործել ասպիրանտական կրթությունը՝ որպես բաղադրիչ ընդունելով հետազոտությունների միջոցով նոր գիտելիքի ստեղծումը»**: Այս գործողության հետ կապված՝ ՀՀ ԿԳՆ նախաձեռնությամբ սկսվել և ընթանում են քննարկումներ ասպիրանտական կրթության բովանդակու-

թյան, կրթական բաղադրիչների և դրանց իրականացման վերահսկողության մեխանիզմների հստակեցման ուղղությամբ:

*2-րդ գործողությամբ* նախատեսված է. «Մշակել և ներդնել ասպիրանտի ղեկավարման և մասնագիտական առաջընթացի գնահատման նոր գործընթաց՝ հիմնված ասպիրանտի, նրա ղեկավարի և Համալսարանի միջև հստակ պայմանագրային պարտավորությունների վրա»: Այս ուղղությամբ մշակվել և ներդրվել է ասպիրանտի, նրա ղեկավարի և Համալսարանի միջև պարտավորությունները կարգավորող համաձայնագիր:

Համաձայն *3-րդ գործողության՝* ԵՊՀ-ն շարունակաբար նպաստում է ասպիրանտների միջմասնագիտական, ներհանրապետական և միջազգային համագործակցության իրականացմանը:

*4-րդ գործողությամբ* նախատեսված է. «Ապահովել ասպիրանտական կրթության համար նպաստավոր հետազոտական միջավայր»: Այս նպատակով հարստացվել են գրադարանային ռեսուրսները, ձեռք են բերվել նոր սարքավորումներ, մի շարք ասպիրանտներ ընդգրկվել են նոր գիտահետազոտական ծրագրերում:

### III. ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Չարգացնել հանրային ներգրավման և ծառայությունների համակարգը, իրականել հասարակայնության հետ կապերն ու սոցիալական պատասխանատվությունը:*

Ռազմավարական 3-րդ՝ «Հանրային ներգրավում և ծառայություններ» նպատակի *Խնդիր 3.1*-ով սահմանված է. «*Ապահովել հասարակայնության հետ կապերի հետագա զարգացումը և հանրային պատասխանատվության բարձրացումը*»:

Խնդրի *1-ին գործողությամբ* նախատեսված է. «*Վերանայել ԵՊՀ հանրային կապերի հայեցակարգը*»: Այս առումով, ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված՝ հասարակայնության հետ կապերին, կորպորատիվ սոցիալական պատասխանատվությանը, մարքեթինգային գործընթացին և հանրությանը մատուցվող ծառայությունների բազմազանեցմանն առնչվող դրույթներն արդյունավետ իրականացնելու նպատակով ստեղծվել է աշխատանքային խումբ, որի գործունեությանն ակտիվ մասնակցություն են ցուցաբերել Հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության, Սոցիոլոգիայի, Ժուռնալիստիկայի, Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետների և այլ ստորաբաժանումների ներկայացուցիչները: Մշակվել է ԵՊՀ հանրային կապերի, ԿՍՊ (կորպորատիվ սոցիալական պատասխանատվության) և մարքեթինգային գործունեության հայեցակարգի նախագիծը:

Խնդիր 3.1-ի 2-րդ գործողությամբ նախատեսված է. «Ձարգացնել հանրային կապերի միասնական համակարգը, բարձրացնել հանրային կապերի ներբուհական ցանցի արդյունավետությունը»: Այս նպատակով մշակվել է ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների հասարակայնության հետ կապերի պատասխանատուների գործունեության աշխատակարգը, պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ նրանց հետ: ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածումն իրականացվել է ավելի համակարգված և նպատակատուղված: Կատարված աշխատանքները նպաստել են հանրային կապերի ներբուհական ցանցի արդյունավետության բարձրացմանը:

Ուսումնասիրվել է ԵՊՀ ֆակուլտետների 2016-2020 թթ. Ձարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլանը, և հանրային կապերի ոլորտին վերաբերող դիտողություններն ու առաջարկությունները ներկայացվել են ԵՊՀ ռեկտորատ:

Խնդրի 3-րդ գործողությամբ նախատեսված է. «Ապահովել ինտերնետային պորտալի դինամիկ զարգացումը՝ հարստացնելով և արդիականացնելով դրա բովանդակային և ծրագրային բաղադրիչները»: Այս առումով, ԵՊՀ ինտերնետային ռեսուրսների զարգացման գործողությունների պլանի համաձայն՝ շարունակվել են ԵՊՀ ինտերնետային պորտալի զարգացման աշխատանքները: ԵՊՀ պորտալում ընդգրկված են ավելի քան 90 կայք ու ենթակայք: Ամենօրյա օպերատիվ աշխատանքի շնորհիվ և կայքի այցելուների հետ ինտերակտիվ կապ ապահովելու արդյունքում կայքի այցելուների թիվը նախորդ ուստարվա համեմատ աճել է՝ հասնելով օրական միջինը 8030-ի (ըստ սեր-

վերի ներքին վիճակագրական գործիքի): «Googleanalytics»-ի տվյալների համաձայն՝ օրական այցելուների թիվն անցնում է 5100-ից: ԵՊՀ պորտալի այցելուների 35,4 %-ը կազմում են նոր այցելուները: Ամենաշատ այցելուները Հայաստանից են (91,77 %), այնուհետև ՌԴ-ից (1,94 %), ԱՄՆ-ից (1,11 %), Գերմանիայից (0,44 %) և այլն:

Կայքերի կարևորությունը (տվյալների հավաստի լինելը) ու տարածվածությունը որոշելու համար հաճախ օգտագործվում է Google PageRank-ը, որը չափվում է 0-10 վարկանշավորման սանդղակում: Google PageRank-ի տվյալների համաձայն՝ ԵՊՀ պաշտոնական կայքին տրվել է 7 միավոր, ինչը համարվում է բավականին լավ արդյունք:

ԵՊՀ պորտալում տեղակայվել և շահագործման են հանձնվել մի շարք կայքեր ու առցանց գործիքներ և նոր դիզայնով ու հավելումներով համարված բաժիններ: Ամբողջովին վերափոխվել է «ԵՊՀ փաստաթղթեր» կայքը (<http://doc.y-su.am>):

Խնդիր 3.1-ի *4-րդ գործողությամբ* նախատեսված է. «Մշակել մարքեթինգային գործողությունների հայեցակարգ և բազմազանեցնել գովազդային նյութերը»: Սահմանված ժամանակահատվածում տարվել են աշխատանքներ գովազդային նյութերի մշակման և բազմացման ուղղությամբ: Մասնավորապես՝ պատրաստ է լույսընծայման ԵՊՀ-ն ներկայացնող անգլալեզու նոր բուկլետը, որի պահանջարկը մեծ է ԵՊՀ տարբեր ստորաբաժանումների և ԵՊՀ հյուրերի շրջանում: Մշակվել և պատրաստ են արտադրության ԵՊՀ տարբերանշանով զանազան իրեր:

Ոլորտի մասնագետների հետ խորհրդատվության արդյունքում որոշվել է մարքեթինգային գործողությունների բնագավառը համակցել

հանրային կապերի և ԿՍՊ ոլորտների հետ և կազմել մեկ ընդհանուր փաստաթուղթ (հայեցակարգ):

Խնդիր 3.1-ի 5-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ընդլայնել հասարակության տարբեր խմբերի հետ հետադարձ կապը և զարգացնել մշտադիտարկման համակարգը»*: ԵՊՀ-ին հասցեագրված թղթային նամակներին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանելուն զուգընթաց՝ առավել ուշադրություն է դարձվել էլեկտրոնային նամակներին օպերատիվ արձագանքելուն: ԵՊՀ պորտալում հրապարակված նորությունները տեղադրվել են ԵՊՀ «Facebook»-յան էջում, որոնց ներքո՝ մեկնաբանությունների բաժնում, ծավալվել են քննարկումներ, հարցադրումներին տրվել պարզաբանող պատասխաններ: Պարբերաբար մշակվել և վերլուծվել են էլեկտրոնային փոստով ու «Facebook» սոցիալական կայքի և ԵՊՀ պորտալի «Հարց-պատասխան» բաժնի միջոցով ստացված նամակները:

Նույն խնդրի 6-րդ գործողությամբ նախատեսված է. *«Մշակել կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հայեցակարգ, ընդլայնել և զարգացնել Համալսարանի ներգրավումը համազգային ծրագրերին ու նախաձեռնություններին, բազմազանեցնել հանրությանը մատուցվող ծառայությունները»*:

Համազգային ծրագրերում Համալսարանի ներգրավումը տասնամյակներ շարունակ համարվում է գերակա ուղղություն: Մայր բուհը ստեղծման օրվանից ի վեր եղել է մեր ժողովրդի շահերի յուրատեսակ արտահայտիչը, նրա հետ է եղել ազգային բոլոր խնդիրների վերհանման ու վճռման պահերին: Այդպես էր նաև 2016 թ. ապրիլյան քառօրյա պատերազմի օրերին: Այդ օրերին ԵՊՀ-ն մեծ պատրաստակամու-

թյամբ թե՛ բարոյապես, թե՛ նյութապես աջակից եղավ հայրենիքի սահմաններն անառիկ պահող հայ զինվորին: Մա իր տեսակի մեջ յուրօրինակ ու ինքնաբուխ նախաձեռնություն էր, որով անուղղակիորեն դրսևորվում է նաև ԵՊՀ-ի ներգրավումը համազգային ծրագրերում (կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը): ԵՊՀ ռեկտորատի, ուսանողական կառույցների և արհեստակցական կազմակերպության ներկայացուցիչների նախաձեռնությամբ կազմակերպվել է կամավորագրման գործընթաց, ինչպես նաև առաջին անհրաժեշտության պարագաների և դրամական միջոցների հավաք:

Ապրիլյան պատերազմի օրերին և դրանից հետո ԵՊՀ-ի կողմից մեծ ծավալի ֆինանսական և նյութական աջակցություն է տրամադրվել Արցախին: Մասնավորապես՝ համալսարանականների կողմից ցուցաբերվել է շուրջ 5 մլն դրամի դրամական և նյութական օգնություն, իսկ ԵՊՀ-ի կողմից նվիրաբերվել է շուրջ 30 մլն դրամ, այդ թվում՝ ֆինանսական աջակցություն, առաջին անհրաժեշտության պարագաներ, սնունդ, վրաններ և այլն: 2016 թ. ապրիլյան պատերազմի ընթացքում զոհված զինծառայողների ընտանիքների սոցիալական վիճակը բարելավելու նպատակով ԵՊՀ-ն 2016 թ. հունիսի 1-ից իրականացնում է զոհված 24 զինծառայողի 56 անչափահաս երեխաներին մինչև նրանց չափահաս դառնալը ամենամսյա դրամական օգնություն տրամադրելու ծրագիր: Յուրաքանչյուր զոհված զինծառայողի ընտանիքի մեկ անչափահաս երեխային ամսական վճարվող օգնության չափը 40.000 ՀՀ դրամ է, իսկ նույն ընտանիքի յուրաքանչյուր հաջորդ երեխային՝ 20.000 ՀՀ դրամ: Այս դրամական օգնությունը տարեկան կազմում է շուրջ 25 մլն դրամ:

Խնդիր 3.1-ի 7-րդ գործողությամբ նախատեսված է. *«Բարձրացնել ներքին կորպորատիվ հաղորդակցության արդյունավետությունը»*: Այս կապակցությամբ, կորպորատիվ ներքին հաղորդակցության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ընդլայնվում և կատարելագործվում է ԵՊՀ աշխատողների էլեկտրոնային փոստի համակարգը, ներդրվել է ԵՊՀ աշխատողների համացանցային ներքին տիրույթը (intranet.ysu.am): «Երևանի համալսարան» թերթը և պորտալի տարբեր կայքեր նույնպես ապահովում են կորպորատիվ ներքին հաղորդակցության բարձր մակարդակը:

ԵՊՀ ռեկտորատի կողմից իրականացվող կառուցվածքային ստորաբաժանումների հանրային կապերի պատասխանատուների հետ ակտիվ և հետևողական աշխատանքը ևս նպաստում է ներկորպորատիվ արդյունավետ հաղորդակցման մակարդակի բարձրացմանը:

Խնդրի 8-րդ գործողությամբ նախատեսված է. *«Գրահրատարակչական գործունեության արդյունքները առավելագույնս նպատակաուղղել հանրային ծառայությունների մատուցմանը»*: ԵՊՀ-ի կողմից հրատարակված գրքերը պարբերաբար նվիրատվության կարգով տրամադրվել են մայրաքաղաքի և մարզերի քաղաքային ու բուհական գրադարաններին: Կազմակերպվող ցուցադրությունների և էքսպոների ընթացքում ևս ԵՊՀ հրատարակչության մասնագիտական գրականությունից որոշակի քանակությամբ տրամադրվել է համապատասխան ոլորտով հետաքրքրված անձանց:



*Խնդիր 3.2-ով սահմանված է. «Զարգացնել լրացուցիչ կրթության միասնական համակարգը՝ ապահովելով հանրային պահանջարկի և համալսարանական առաջարկի միջև փոխկապակցությունը»:*

Խնդրի իրագործման համար 4-րդ գործողությամբ նախատեսված է. «Բարձրացնել լրացուցիչ կրթության ծրագրերի վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակը»: Այս ուղղությամբ ստեղծվել է «ԵՊՀ հետբուհական լրացուցիչ կրթություն» կայքը (<http://extension.yasu.am>), որում ներկայացված են ԵՊՀ-ում իրականացվող լրացուցիչ մասնագիտական հիմնական կրթական ծրագրերը: Կայքը ապահովելու է հետբուհական լրացուցիչ կրթության շահառուների հետ կապը և նպաստելու է ԵՊՀ համապատասխան ծառայությունների հանրայնացմանը:

#### IV. ՈՐԱԿՅԱԼ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

*Ձարգացնել դասախոսական կազմի ներուժը, մարդկային ռեսուրսների կառավարման համակարգը և բարձրացնել աշխատողների բարեկեցության մակարդակը:*

Ռազմավարական 4-րդ՝ «Որակյալ մարդկային ռեսուրսներ» նպատակի *Խնդիր 4.1*-ով սահմանված է. «*Ձարգացնել դասախոսական կազմի ներուժը*»:

Խնդրի իրագործմանն ուղղված *1-ին գործողությամբ* նախատեսված է. «*Կատարելագործել դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագիրը*»: Այս առումով, մշակվել և ԵՊՀ գիտխորհրդի կողմից 2016 թ. մայիսի 26-ի թիվ 7 նիստում հաստատվել է 2 փաստաթուղթ՝ «Կրեդիտային համակարգով պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը (2016-2021 թթ.)» և «Կանոնակարգ Երևանի պետական համալսարանում պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի կազմակերպման», որոնց համապատասխան՝ 2016/2017 ուստարվանից ԵՊՀ-ում կազմակերպվում է պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման գործընթացը:

Նշված խնդրի *2-րդ գործողությամբ* նախատեսված է. «*Մշակել և իրականացնել երիտասարդ դասախոսների մանկավարժական և հոգեբանական հմտությունները զարգացնող վերապատրաստման դասընթացներ*»: ԵՊՀ գիտխորհրդի կողմից հաստատված վերոնշյալ ԴՈԲ

(դասախոսների որակավորման բարձրացում) ծրագրի «Մանկավարժական-հոգեբանական պատրաստություն» կրթամասում երիտասարդ (մինչև 5 տարվա ստաժ ունեցող) դասախոսների համար սահմանված են հատուկ պահանջներ: Նախատեսված են ինչպես պարտադիր, այնպես էլ կամընտրական դասընթացներ, որոնք ներառված են «ԵՊՀ հետբուհական լրացուցիչ կրթություն» նորաբաց կայքի «Դասախոսների որակավորման բարձրացում» բաժնում:

**Խնդիր 4.2**-ով սահմանված է. **«Ներդնել մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետ համակարգ»:** Խնդրի իրագործման նպատակով նախատեսված է 5 գործողություն: Մասնավորապես՝ *3-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Մշակել պաշտոնի անձնագրեր վարչական աշխատողների համար»*, իսկ *4-րդով՝ «Մշակել աշխատանքի նկարագրեր ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական և այլ տարակարգերի աշխատողների համար»:* Վերոհիշյալ գործողությունների իրականացման նպատակով անցած ուստարվա երկրորդ կիսամյակում մշակվել և ԵՊՀ ԳԽ նիստում հաստատվել է «ԵՊՀ վարչական պաշտոնների, ուսումնաօժանդակ և ինժեներատեխնիկական հաստիքների դասակարգման կանոնակարգը» (Որոշում N 8/3, 7 հուլիսի 2016 թ.):

**Խնդիր 4.3**-ով սահմանված է. **«Բարձրացնել աշխատողների բարեկեցության մակարդակը, բազմազանեցնել իրականացվող սոցիալական ծրագրերը»:**

Այս խնդրի իրագործման նպատակով *1-ին գործողությամբ* նախատեսված է. *«Զարգացնել դասախոսների տարբերակված հավելավճարի մեխանիզմը»:* Այս գործողության կատարումը ևս կապված է

«Երևանի պետական համալսարանի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգի» կիրարկման հետ: Կարգի 1-ին և 2-րդ բաժիններում սահմանված աշխատանքների (գործունեության) հաշվարկման մասերն ուժի մեջ են 2016/2017 ուստարվանից, իսկ 1-ին և 2-րդ բաժիններում սահմանված աշխատանքների (գործունեության) համար լրավճարների վճարման և կարգի 3-րդ բաժնով սահմանված մրցույթի արդյունքում լրավճարների հաշվարկման և վճարման մասերն ուժի մեջ են մտնում 2017 թ. հուլիսի 15-ից:

Խնդրի *4-րդ գործողությամբ* նախատեսված է. «Ներդնել սոցիալական աջակցության բազմաբնույթ ծրագրեր»: Այս ուղղությամբ որոշակի աշխատանք է կատարվել: Մասնավորապես՝ մշակվել է ԵՊՀ աշխատողների բժշկական ապահովագրությունն իրականացնելու համար համապատասխան տեխնիկական առաջադրանքը, նախատեսվում է ներդրումը 2017 թ-ից:

## V. ՈՐԱԿՅԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

*Ձևավորել ժամանակակից պահանջները բավարարող համալսարանական ենթակառուցվածքներ:*

Ռազմավարական 5-րդ՝ «Որակյալ ենթակառուցվածքներ» նպատակի *Խնդիր 5.1*-ով սահմանված է. *«Զարգացնել ուսումնագիտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ լսարանային, լաբորատոր պայմանները, արդիականացնել համալսարանական ենթակառուցվածքները»:*

Խնդրի *1-ին գործողությամբ* նախատեսված է. *«Տեխնոլոգիապես վերազինել լսարաններն ու ուսումնական լաբորատորիաները»:* Այս խնդրի առնչությամբ ամբողջովին արդիականացվել են Մաթեմատիկայի և մեխանիկայի, Իրավագիտության, Ռոմանագերմանական բանասիրության, Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետների տարածքներում գտնվող համակարգչային լսարանները: Շուրջ 40 լսարաններում պետական քննությունների և ավարտական աշխատանքների պաշտպանության ընթացքը տեսաձայնագրելու համար նախատեսված սարքավորումները արդիականացվել են՝ ձայնագրության որակը բարձրացնելու նպատակով:

Խնդիր 5.1-ի *2-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Վերանորոգել և արդիականացնել գիտական լաբորատորիաները»:* Ֆիզիկատեխնիկական հետազոտությունների կենտրոնի համար աշխատանքային և լաբորատոր պայմաններ ստեղծելու նպատակով հիմնանորոգվել է

շուրջ 200 մ<sup>2</sup> տարածք, ձեռք են բերվել շուրջ 40 միլիոն դրամի կահույք և լաբորատոր սարքավորումներ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում գործող Նորարարությունների մրցակցային հիմնադրամի տրամադրած դրամաշնորհի միջոցներով (ինչպես նաև ԵՊՀ համաֆինանսավորմամբ) ստեղծվող Մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոնի համար Կենսաբանության ֆակուլտետում վերանորոգվել է շուրջ 100 մ<sup>2</sup> տարածք, ձեռք են բերվել լաբորատոր և գրասենյակային կահույք, սարքավորումներ և նյութեր՝ շուրջ 200 մլն դրամի (ապրանքների մատակարարումը նախատեսվում է 2016 թ. դեկտեմբեր-2017 թ. փետրվար ամիսներին):

Նշված խնդրի *5-րդ գործողությամբ* նախատեսված է. «Արդիականացնել մարզահամալիրը»: Այս առնչությամբ, ԵՊՀ մարզահամալիրում կատարվել են հիմնանորոգման աշխատանքներ, ներդրումների ընդհանուր ծավալը կազմել է ավելի քան 1.1 միլիարդ ՀՀ դրամ: Իրականացվել են հետևյալ հիմնական շինարարական աշխատանքները՝ նոր մասնաշենքի կառուցում (շուրջ 1200 մ<sup>2</sup>), տանիքների վերանորոգում (շուրջ 1500 մ<sup>2</sup>), ծանրամարտի, ըմբշամարտի, վոլեյբոլի, բասկետբոլի, թենիսի, ֆուտբոլի և այլ դահլիճների և տարածքների հիմնանորոգում (շուրջ 8000 մ<sup>2</sup>), Հյուրերի տան, նոր հանդերձարանների, սանհանգույցների, լոգախցիկների, հրաձգարանի և ալպինիստական պատի կառուցում, հարակից բակի բարեկարգում և ասֆալտապատում (շուրջ 8000 մ<sup>2</sup>) և այլն:

Վերոնշյալ խնդրի 7-րդ գործողությամբ նախատեսված է. *«Իրականացնել ուսումնական մասնաշենքերի վերանորոգման աշխատանքներ՝ զուգահեռ ապահովելով հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար հարմարեցված պայմաններ»*: Այս ուղղությամբ, ԵՊՀ կենտրոնական և ուսումնական մասնաշենքերում կատարվել են մեծածավալ վերանորոգման, կառուցման և արտաքին հարդարման աշխատանքներ: Հիմնովին վերավոխվել է կենտրոնական մասնաշենքի ճեմասրահի լուսավորության համակարգը: Կենտրոնական մասնաշենքում տեղադրվել են հենաշարժողական խնդիրներ ունեցող մարդկանց համար երկու վերելակ և դրանց օգտագործման համար թեքահարթակներ: Թիվ 7 ուսումնական մասնաշենքի վերնահարկում ՀՀ կառավարության, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի, IBM ընկերության և ԵՊՀ-ի նախաձեռնությամբ կառուցվել է նոր հարկաբաժին Իննովացիոն լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնի համար: Միաժամանակ, թիվ 7 ուսումնական մասնաշենքում տեղադրվել է վերելակ, և շենքը հարմարեցվել է հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար:

Խնդիր 5.1-ի 8-րդ գործողությամբ նախատեսված է. *«Վերանորոգել և արդիականացնել գրադարանի ընթերցասրահներն ու գրապահոցը»*: Այս ուղղությամբ իրականացվել են ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նկուղում գտնվող գրապահոցի վերանորոգման աշխատանքներ (շուրջ 970 մ<sup>2</sup> տարածք):

Համաձայն 10-րդ գործողության՝ *«Ձարգացնել ուսումնական մասնաշենքերի հսկողության ենթակառուցվածքը»*, արդիականացվել է

անվտանգության ծառայության կողմից օգտագործվող տեսահսկման համակարգը: Մի շարք մասնաշենքերում (այդ թվում՝ 6-րդ և 8-րդ ուսումնական մասնաշենքերում), վերանորոգված մարզահամալիրում և նորակառույց Հյուրերի տանը տեղադրվել են տեսախցիկներ (տարածքը վերահսկելու նպատակով), որոնց միջոցով դիտարկումը իրականացվում է նաև ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի պահակակետից (տեղադրված տեսախցիկների ընդհանուր քանակը՝ 15):

***Խնդիր 5.2-*** ով սահմանված է. **«Ձարգացնել ուսումնագիտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվական համակարգերն ու գրադարանային ենթակառուցվածքները»:**

Այս խնդրի *1-ին գործողությամբ* նախատեսված է. *«Մշակել տեղեկատվական համակարգերի զարգացման հայեցակարգ»:* ԵՊՀ տարբեր ստորաբաժանումների ներգրավմամբ իրականացվել են տեղեկատվական համակարգերի զարգացման հայեցակարգի մշակման աշխատանքներ: Հայեցակարգի նախագիծը պատրաստ կլինի 2017 թ. առաջին կիսամյակում, կներկայացվի տեխնիկական խորհրդի քննարկմանը և այնուհետև՝ ԳԽ-ի հաստատմանը:

Խնդրի *3-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Ձարգացնել ներքին համակարգչային օպտիկամանրաթելային, լարային և անլար ցանցը՝ մեծացնելով կապուղիների թողունակությունը»:* Հիմնովին վերանորոգված մարզահամալիրի և նորակառույց Հյուրերի տան համար անցկացվել է օպտիկամանրաթելային կապուղի՝ 1 Գբիթ/վ թողունակությամբ: Բարելավվել է Աբովյան 52 հասցեում գործող ԵՊՀ աստղադիտարանի հետ կապի որակը (տեղադրվել է նոր ռադիոմոդեմ՝ 120



Մբիթ/վ թողունակությամբ): ԵՊՀ մասնաշենքերում կատարվել են ներքին ցանցի բարելավման և լրացուցիչ լարանցումների աշխատանքներ (շուրջ 1100 մ երկարությամբ UTP տիպի լարեր):

Վերոնշյալ խնդրի *5-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Բարձրացնել ներքին տեղեկատվական համակարգերի պաշտպանվածության մակարդակը»*: ԵՊՀ ներքին ցանցի աշխատանքը բարելավելու նպատակով ձեռք է բերվել և տեղադրվել արտաքին միջամտություններ և հարձակումներ կանխող ցանցային պաշտպանիչ սարք (Firewall), իսկ էլեկտրոնային փոստի սերվերների պաշտպանվածության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ ձեռք են բերվել և տեղադրվել «https» սերտիֆիկատներ:

Նույն խնդրի *7-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Ավարտել հիմնական ուսումնական գրականության թվայնացման գործընթացը, ապահովել գրադարանի էլեկտրոնային քարտարանի ամբողջական ձևավորումն ու շահագործումը»*:

Գրադարանի քարտարանի էլեկտրոնային եղանակով շահագործումը շարունակելու և աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ներդրվել է KOHA համակարգը: Թվայնացվել է շուրջ 450 գիրք, և քարտարան է մուտքագրվել շուրջ 12700 անուն գրականություն:

Խնդրի *8-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Ընդլայնել Համալսարանի մասնակցությունը միջազգային գրադարանային ցանցերին և կոնսորցիումներին»*: ԵՊՀ-ն շարունակել է իր անդամակցությունը IFLA և LIBER միջազգային գրադարանային ասոցիացիաներին, ինչպես նաև Հայաստանի գրադարանների ասոցիացիային և Հայաստանի

Էլեկտրոնային գրադարանների ասոցիացիային (ELCA): Գրադարանը պահպանել է բաժանորդագրությունը ռուսական elibrary.ru գիտատեղեկատվական ցանցին, որի միջոցով հասանելի են ցանցի ավելի քան 1200 անուն ռուսալեզու պարբերականների էլեկտրոնային տարբերակները:

Գրադարանը գերմանական Subito կազմակերպության միջոցով կատարում է էլեկտրոնային հոդվածների սպասարկում օգտվողներին: Ծրագրի շրջանակներում 2016 թ. սպասարկվել է ավելի քան 3000 գիտական հոդված: Գրադարանը բաժանորդագրված է Springer էլեկտրոնային գրադարանին, որում ընդգրկված են 2.765 գիտատեխնիկական ամսագրեր, ինչպես նաև EBSCO հրատարակչությանը, որը հնարավորություն է ընձեռում օգտվելու հետևյալ շտեմարաններից՝ Academic Search Premier, MEDLINE, Business Source Premier, Regional Business News, ERIC, MasterFILE Premier, Health Source - Consumer Edition, Health Source: Nursing/Academic Edition, Newspaper Source, GreenFILE, Library, Information Science & Technology Abstracts:

Խնդիր 5.2-ի *9-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Ինտենսիվացնել ուսումնագիտական գրականության արդիականացման գործընթացը»:*

Գրադարանը շարունակել է նոր գրականության համալրումը: Գրադարանային ֆոնդը համալրվել է ավելի քան 1450 անուն 17500 միավոր գրականությամբ:

## VI. ՈՐԱԿՅԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Ձարգացնել ուսանողական օժանդակ ծառայությունները, խթանել ուսանողական կազմակերպությունների աշխատանքները:*

Ռազմավարական 6-րդ՝ «Որակյալ ծառայություններ» նպատակի իրագործման համար նախատեսված է կյանքի կոչել երկու խնդիր:

*Խնդիր 6.1-ով սահմանված է. «Ձարգացնել ուսանողական օժանդակ ծառայությունները՝ խթանող կրթական միջավայր ապահովելու նպատակով»:*

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. «Ձարգացնել ուսանողներին մատուցվող խորհրդատվական և լրացուցիչ կրթական ծառայությունները»: Այս նպատակով Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը շարունակել է ընդլայնել գործընկեր ձեռնարկությունների հետ համագործակցության շրջանակը, որի արդյունքում ձեռնարկությունների փորձագետների և դասընթացավարների կողմից ԵՊՀ-ում կազմակերպվել են թեմատիկ տարբեր սեմինար-դասընթացներ: Մասնակից ուսանողները և շրջանավարտները ստացել են ինչպես ոլորտին, այնպես էլ կարիերայի կառուցմանը վերաբերող խորհրդատվություն և տեղեկատվություն: Ուշագրավ են հատկապես «Ֆինանսաբանկային կենտրոն» հիմնադրամի, «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի, «Զի-Ար-Սի գիտելիքի կենտրոն» ՍՊԸ-ի, «ԱՐՓԱ» ինստիտուտի մասնագետների մասնակցությամբ անցկացված միջոցառումները:

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. «Բազմազանեցնել մարզամշակութային ծրագրերը, զարգացնել ուսանողական ակում-

*բային համակարգը՝ շեշտադրելով ինտելեկտուալ, բնապահպանական, երկրագիտական և հայրենաճանաչողական բնույթի միջոցառումները»:*

Այս ուղղությամբ, Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի ջանքերով ստեղծվել է ԵՊՀ մարտական պատրաստության ակումբը, որի նպատակն է զարգացնել ուսանողների մարտական և ֆիզիկական պատրաստության վիճակը, աջակցել ռազմահայրենասիրական դաստիարակությանը, տեսական և գործնական դասընթացների միջոցով զարգացնել ուսանողների ռազմագիտական և ռազմաքաղաքական գիտելիքներն ու հմտությունները: Բանակ-հասարակություն կապի ամրապնդմանն ուղղված՝ իրականացվել են այցելություններ գորամասեր, մարտական դիրքեր և հենակետեր՝ նպաստելով ուսանող-զինվոր երկխոսությանը: Իրականացվել են հանդիպում-քննարկումներ ՀՀ ՊՆ գերատեսչությունների ղեկավարների, ռազմական ոլորտի փորձագետների և արցախյան պատերազմի ազատամարտիկների հետ: Կազմակերպվել է «Ուսանողական ռազմական բանակում 2016» ծրագիրը, որի շրջանակներում շուրջ 120 ուսանող Արցախում մասնակցել է 7-օրյա վրանային ճամբարին: Աշխատանքներ են իրականացվել ժայռամազլցման, հրաձգության ակումբների ձևավորման ուղղությամբ:

Ուսանողական մշակութային կյանքն ակտիվացնելու նպատակով Մշակույթի կենտրոնի ջանքերով ստեղծվել է հայկական ժողովրդական գործիքների «Էթնոբենդ» խումբը, ինչպես նաև կիրթառահարների խումբը:

Իրականացվել են մի քանի տասնյակ հայրենաճանաչողական միջոցառումներ (էքսկուրսիաներ ՀՀ պատմամշակութային վայրեր, այցելություններ թանգարաններ և այլն), որոնք ուղեկցվել են ԵՊՀ մասնագետների կողմից անցկացված դասախոսություններով:

Խնդիր 6.1-ի *5-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Մշակել ուսանողների կողմից վարչական անձնակազմին տարբեր խնդիրներով դիմելու ընթացակարգ»:*

ԵՊՀ ուսանողական կառույցներն իրականացրել են աշխատանքներ ուսանողների կողմից վարչական անձնակազմին առավել հաճախ դիմելու խնդիրները ուսումնասիրելու և դրանց կանոնակարգման հարցերն ի հայտ բերելու ուղղությամբ: Կազմակերպվել են հանդիպումներ տարբեր վարչական օղակների ղեկավարների և ուսանողների հետ: Մշակվել է համապատասխան կանոնակարգ-ուղեցույցի նախագիծ, որը 2017 թ. հունվարին կներկայացվի Գիտական խորհրդի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության մշտական հանձնաժողովի քննարկմանը:

Նշված խնդրի *6-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Խթանել ուսանողների կարիերայի ծառայությունները՝ զարգացնելով լրացուցիչ պրակտիկայի (ինտերնշիփ), խորհրդատվության և ուսուցողական դասընթացների համակարգը»:* Այս առնչությամբ, ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնը կազմակերպել է խորհրդատվական միջոցառումներ ԵՊՀ բոլոր ֆակուլտետների ուսանողների և շրջանավարտների համար, ուսանող-գործատու հանդիպում-քննարկումներ, որոնց ընթացքում ներկայացվել են ժամանակակից աշխատաշուկայի պահանջները, մրցունակ և կայացած աշխատակից լինելու հիմնական

գործունեները, երկարատև կարիերայի կառուցման նրբությունները և այլն: Ձեռնարկությունների հետ համագործակցությունը խթանելու և արդյունավետ դարձնելու նպատակով ստեղծվել է նաև Ձեռնարկությունների հետ համագործակցության ինտերնետային պորտալ ([ysu.am/cooperation](http://ysu.am/cooperation)):

Աշխատանքներ են իրականացվել լրացուցիչ պրակտիկայի (ինտերնշիփի) գործընթացը առավել կանոնակարգված դարձնելու ուղղությամբ, ինչի արդյունքում 2015/2016 ուստարվա երկրորդ կիսամյակի ընթացքում կենտրոնի գործընկեր կազմակերպություններում (ինչպես ՀՀ պետական, այնպես էլ մասնավոր ոլորտի) պրակտիկայի հնարավորություն են ստացել ԵՊՀ 78 ուսանող և շրջանավարտ:

*7-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Նպաստել ուսանողների ձեռներեցության հմտությունների զարգացմանն ուղղված ծառայությունների կայացմանը»:*

2016 թ. մայիսից իր աշխատանքներն է մեկնարկել Ձեռներեցության զարգացման կենտրոնը, որի գործունեությանն աջակցել է «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան» հիմնադրամը: Կարճ ժամանակահատվածում նախանշվել են կենտրոնի աշխատանքային ուղղությունները, կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, համագործակցության մեխանիզմներ են մշակվել ձեռներեցության և Start-Up-ների խթանման ուղղությամբ գործող միջազգային և տեղական կառույցների հետ:

*Խնդիր 6.2*-ով սահմանված է. «**Զարգացնել Համալսարանի ուսանողական կազմակերպությունների կարողություններն ու խթանել ուսանողական ինքնակառավարումը**»:

Այս խնդրի *2-րդ գործողությամբ* նախատեսված է. «*Կազմակերպել ուսանողական կազմակերպությունների ինստիտուցիոնալ զարգացմանը նպաստող և ուսանողների առաջնորդությանն աջակցող ուսուցողական դասընթացներ*»:

Ուսանողներին Ուսանողական խորհրդի աշխատանքներում ներգրավելու նպատակով կազմակերպվել են տարբեր միջոցառումներ, քննարկումներ, բանավեճեր, սեմինարներ (առաջին կուրսեցիներին իրենց իրավունքներին և պարտականություններին, ինչպես նաև ուսանողական ինքնակառավարման համակարգին ծանոթացնելու նպատակով ամենամյա երկփուլ սեմինար-դասընթացը, ուսանողական ինքնակառավարման և մասնակցության հիմնախնդիրներին առնչվող միջազգային ուսանողական երևանյան համաժողովը և այլն):

ՈւԳԸ գիտական խորհուրդն ընդունել է նոր աշխատակարգ, որը մանրամասնորեն սահմանում է ՈւԳԸ-ի և դրա տարբեր ստորաբաժանումների աշխատանքի կազմակերպման հիմնական սկզբունքները, պարտավորություններն ու իրավունքները: Իրականացվել են մի շարք միջոցառումներ, տարբեր ֆակուլտետներում անցկացվել են ուսանողական և ասպիրանտական դասախոսություններ, բանավեճեր և այլն:

Խնդիր 6.2-ի *3-րդ գործողությամբ* նախատեսված է. «*Խթանել Համալսարանի ուսանողական կազմակերպությունների ներհանրապետական և միջազգային համագործակցությունը*»: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի հետ համատեղ Ս. Էջմիած-

նում կազմակերպվել է Վարդանանց նահատակներին նվիրված միջոցառում, որին մասնակցել են նաև ՀՀ այլ բուհերի ուսանողներ: Համալսարանականները մասնակցել են միջազգային, հանրապետական և համահամալսարանական մրցույթների և փառատոների (Հայաստանում ֆրանկոֆոնիայի երկամսյակի շրջանակներում կայացած Ֆրանսիական երգի մրցույթ, «Ուսանողական ֆիլհարմոնիա» միջբուհական մրցույթ, «Արտ Ֆեստ 2016» միջազգային բաց փառատոն), ինչպես նաև ուսանողական սպարտակիադային և այլ մարզական միջոցառումների:

ԵՊՀ ջոկատը մասնակցել է ավանդական «Բազե-2016» համահայկական երիտասարդական հավաքին: ԵՊՀ ՈԻԽ նախագահի գլխավորած նարնջագույն ճակատը հաղթող է ճանաչվել «Բազե-2016» հավաքում, համալսարանականները երգարվեստում արժանացել են 1-ին մրցանակին, պարարվեստում՝ 2-րդ մրցանակին, իսկ լողի մրցումներում՝ 2-րդ մրցանակին:

ԵՊՀ ՈւԳԸ-ն ակտիվորեն համագործակցել է ՀՀ-ում, ԼՂՀ-ում և արտերկրում գործող գիտաուսումնական և այլ կազմակերպությունների հետ: Համագործակցության շրջանակներում կազմակերպվել են գիտաժողովներ, աշխատաժողովներ, հողվածների ժողովածուի հրատարակում, վերապատրաստման դասընթացաշարեր, սեմինար-քննարկումներ, փոխադարձ այցեր և այլն:

Խնդիր 6.2-ի 4-րդ գործողությամբ նախատեսված է. *«Նպաստել ուսանողների հետազոտական աշխատանքները խթանող ՈւԳԸ ծրագրերի արդյունավետության բարձրացմանը»*: Այս առնչությամբ իրականացվել են աշխատանքներ՝ ուղղված հմտությունների փոխանցման և



կիրառման գործընթացներին: Մասնավորապես՝ կազմակերպվել է գիտական աշխատանք կատարելու հմտությունների դասընթաց, որի շրջանակում ԵՊՀ բոլոր ֆակուլտետներում անցկացվել են ինտերակտիվ դասախոսություններ՝ ներգրավելով 400-ից ավելի սովորողների:

Կազմակերպվել է ՀՀ անկախության 25-րդ տարեդարձին նվիրված ծավալուն գիտական նստաշրջան, որն անց է կացվել 20 մասնագիտական բաժանմունքներում: Ներկայացվել է շուրջ 500 հայտ (գեկուցման սեղմագրի և գիտական ղեկավարի կողմից տրված կարծիքերաշխավորագրի տեսքով) ՀՀ և ԼՂՀ երկու տասնյակ բուհերից ու գիտահետազոտական կենտրոններից: Հայտատուների այս թիվը 30 %-ով գերազանցում է նախորդ գիտական նստաշրջանի ցուցանիշը: Գրախոսության արդյունքում գեկուցման է երաշխավորվել մոտ 370 սովորողի հայտ:

Իրականացվել են նաև ՈւԳԸ գիտական հոդվածների հերթական ժողովածուի հրատարակման նախապատրաստման աշխատանքները: Նախատեսվում է 2016/2017 ուստարվա առաջին կիսամյակում հրատարակել շուրջ 200 սովորողի գիտական հոդված:

VII. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԶԱՆԵՑՈՒՄ ԵՎ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ

*Ձարգացնել Համալսարանի ընդունելության մարքեթինգային գործընթացները, օպտիմալացնել ընդունելությունը և այն համապատասխանեցնել երկրի զարգացման կարիքներին, հանրության և աշխատաշուկայի պահանջներին: Ընդլայնել օտարերկրյա ուսանողների համակազմը:*

Ռազմավարական 7-րդ՝ «Ընդունելության բազմազանեցում և համապատասխանություն» նպատակի *Խնդիր 7.1*-ով սահմանված է. **«Ձարգացնել ընդունելության մարքեթինգային գործընթացները՝ դիմորդների հոսքի պահպանման և մեծացման նպատակով»:**

Այս խնդրի իրականացման ուղղությամբ բոլոր 9 գործողությունների համար սահմանված է կատարման ժամկետ՝ 2016-2020 թթ.: Քննարկվող ժամանակահատվածի համար նախատեսված գրեթե բոլոր գործընթացներն իրականացվել են:

Խնդրի *3-րդ գործողությամբ* նախատեսված է. «Ձարգացնել դիմորդների մասնագիտական կողմնորոշման համար միասնական տեղեկատվական համակարգը»: Այս նպատակով նախապատրաստվել և 2500 տպաքանակով հրատարակվել են «Դիմորդի ուղեցույց-2016» ձեռնարկը, ինչպես նաև ԵՊՀ-ն ներկայացնող գունավոր բուկլետներ՝ 8000 տպաքանակով, որոնք անվճար բաժանվել են հանրապետության հանրակրթական բոլոր հաստատություններին: Կատարելագործվել է Համալսարանի կայքէջում դիմորդների հետ տարվող աշխատանքների լուսաբանումը:

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. «ԵՊՀ-ում և ՀՀ մարզերում դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար հանրակրթական տարբեր առարկաների գծով ամենամյա օլիմպիադաներն անցկացնել 2 փուլով՝ ընդլայնելով մասնակիցների շրջանակը»: 8 տարի անընդմեջ ԵՊՀ-ում և ՀՀ մարզերում դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար կազմակերպվում և անց է կացվում հանրակրթական 14 առարկաների գծով օլիմպիադա: 2016 թ. առաջին անգամ օլիմպիադան անցկացվեց 2 փուլով. մասնակիցների թիվը 1-ին փուլում 3010 էր, իսկ 2-րդ փուլում՝ 598: ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ օլիմպիադայում հաղթած և I, II և III կարգի դիպլոմների արժանացած 151 աշակերտի համար նախատեսվել է (և արդեն իրականացվել է) Համալսարանի վճարովի համակարգ ընդունվելու դեպքում առաջին կուրսում նրանց տրամադրել համապատասխանաբար 50, 40 և 30 տոկոս ուսման վարձի զեղչ:

Նշված խնդրի 5-րդ գործողությամբ նախատեսված է. «ԵՊՀ-ում պարբերաբար կազմակերպել տարբեր մասնագիտությունների գծով «Ամառային դպրոցներ» հանրապետության ավագ դպրոցների աշակերտների համար»: Այս առումով, ԵՊՀ-ի հետ համագործակցության պայմանագիր ունեցող դպրոցների, հիմնականում ֆիզմաթ հոսքերի 10-11-րդ դասարանների 61 աշակերտի համար Ծաղկաձորի «Համալսարանական» բազայում կազմակերպվել է «Ամառային դպրոց» «Ֆիզիկա» և «Մաթեմատիկա» առարկաներից: Անհրաժեշտ ծախսերի 80 %-ը (4 մլն դրամ) տրամադրվել է ԵՊՀ միջոցների հաշվին:

Իրականացվել է նաև 6-րդ գործողությունը, համաձայն որի՝ ավագ դպրոցների և քոլեջների սովորողների մասնագիտական կողմ-

նորոշման նպատակով 2000-ից ավելի ապագա դիմորդների համար կազմակերպվել են «Բաց դռների օրեր» և նպատակային ճանաչողական այցեր Համալսարան:

Համաձայն 7.1. խնդրի *7-րդ գործողության*՝ դիմորդների հավաքագրման նպատակով ակտիվ աշխատանքներ են կատարվել ՀՀ բոլոր մարզերում, այնտեղ գործող՝ դիմորդների հետ տարվող աշխատանքների գծով ԵՊՀ ներկայացուցչություններն ապահովվել են անհրաժեշտ տեղեկատվական նյութերով:

Խնդիր 7.1-ի *8-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Ընդլայնել ԵՊՀ-ի հետ պայմանագրային հիմունքներով համագործակցող ավագ դպրոցների շրջանակը: Շարունակել ԵՊՀ դասախոսական կազմի կողմից մայրաքաղաքի ավագ դպրոցներում դասընթացների, իսկ մարզային դպրոցներում՝ առանձին դասախոսությունների իրականացումը»:* Այս ուղղությամբ, ՀՀ հանրակրթության համակարգում առկա հիմնախնդիրների լուծմանն աջակցելու նպատակով ԵՊՀ-ն համագործակցության պայմանագիր է կնքել Երևանի և ՀՀ մարզերի ևս 5 ավագ դպրոցների հետ՝ դրանց թիվը հասցնելով 38-ի: Մայրաքաղաքի 23 ավագ դպրոցներում ԵՊՀ տարբեր ֆակուլտետների 36 հեղինակավոր և փորձառու դասախոսներ 21 լրացուցիչ կրթական ծրագրով հատուկ դասընթացներ են վարել՝ ԵՊՀ միջոցների հաշվին: Միննույն ժամանակ, Համալսարանի հետ պայմանագիր կնքած ՀՀ մարզերի 12 ավագ դպրոցներում ԵՊՀ դասախոսների կողմից իրականացվել է 80 առանձին դասախոսություն:

Նշված խնդրի *9-րդ գործողությամբ* նախատեսված է. *«ԵՊՀ դասախոսներին առավելագույնս ներգրավել հանրակրթական ուսում-*

նական հաստատություններում ակնարկային և բովանդակային դասախոսությունների, թեմատիկ քննարկումների կազմակերպման գործունեությունը: Այս ուղղությամբ կատարվել է հետևյալը. ֆակուլտետների դեկանների աջակցությամբ և դասախոսական կազմի լայն ներգրավվածության շնորհիվ հանրակրթական ուսումնական հաստատություններում կազմակերպվել են 315 ակնարկային և բովանդակային դասախոսություններ, թեմատիկ քննարկումներ, ինչպես նաև ուսուցիչների համար՝ մեթոդական խորհրդատվություններ:

**Խնդիր 7.2-ով** սահմանված է. **«Օպտիմալացնել Համալսարանի ընդունելության կառուցվածքը և չափաքանակները՝ դրանք համապատասխանեցնելով աշխատաշուկայի և հանրության պահանջներին, կատարելագործել ընդունելության ընթացակարգերը և աշխատակարգերը»:**

Խնդրի իրագործմանն ուղղված գործողություններից 1-ինով նախատեսված է. **«Օպտիմալացնել ընդունելության ամենամյա պլանավորումն ըստ ուսուցման ձևերի, կրթական աստիճանների և կրթական ծրագրերի՝ ուղենիշ ունենալով արտաքին և ներքին միջավայրերի վերլուծությունը»:** Այս առումով, հաշվետու ժամանակահատվածում օպտիմալացվել են ԵՊՀ ընդունող հանձնաժողովի աշխատանքները:

2-րդ գործողությամբ նախատեսված է. **«Պարբերաբար վերանայել մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համակարգերի ընդունելության կանոնակարգերը և կրթական ծրագրերի ցանկը»:** Այս առումով, ԵՊՀ գիտական խորհրդի 2016 թ. մարտի 31-ի թիվ 6 նիստի 6/5 որոշմամբ հաստատվել է «Երևանի պետական համալսարանի առկա

ուսուցմամբ մագիստրատուրայի 2016/2017 ուստարվա ընդունելության կանոնակարգը»: Նույն նիստի 6/6 որոշմամբ հաստատվել է նաև «Երևանի պետական համալսարանի հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի 2016/2017 ուստարվա ընդունելության կանոնակարգը», իսկ 6/4.2 որոշմամբ՝ «Երևանի պետական համալսարանի հեռակա ուսուցման մագիստրատուրայի 2016/2017 ուսումնական տարվա ընդունելության մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկը»:

***Խնդիր 7.3-ով սահմանված է. «Մեծացնել օտարերկրյա ուսանողների համակազմը Համալսարանի կրթական բոլոր աստիճաններում՝ իրականացնելով հավաքագրման և ուսուցման կազմակերպման համալիր միջոցառումներ»:***

Խնդրի իրագործման նպատակով նախատեսված 3-րդ գործողությամբ սահմանված է. «Համալսարանի կայքում ներկայացնել ԵՊՀ-ում օտարերկրյա ուսանողների ուսումնառության պայմանները, նրանց ուսումնառության ուղեցույցը, ինչպես նաև Համալսարանի ու նրա կրթական ծրագրերի վերաբերյալ համառոտ տեղեկատու նյութեր»:

Այս առնչությամբ պատրաստվել է 40 էջանոց «Արտասահմանյան քաղաքացիների ընդունելության տեղեկատու», որտեղ առկա է տեղեկատվություն ԵՊՀ կրթական համակարգի, ֆակուլտետների, տարբեր մակարդակներով (բակալավրական, մագիստրոսական, ասպիրանտական) առաջարկվող կրթական ծրագրերի, նախապատրաստական դասընթացների, ինչպես նաև ուսման վարձավճարների վերաբերյալ: Տեղեկատուն տպագրվել է որոշակի տպաքանակով և նախատեսվում է տեղադրել ԵՊՀ կայքում:

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. «Կատարելագործել նախապատրաստական կրթական ծրագրերը՝ օտարերկրյա դիմորդների լեզվական և ընդհանուր կրթական գիտելիքների մակարդակը ԵՊՀ ծրագրային պահանջներին համապատասխանեցնելու համար»: Անցած ուստարվա 2-րդ կիսամյակում աշխատանքներ են տարվել օտարերկրյա քաղաքացիների նախապատրաստական դասընթացները արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ. նորացվել են առարկայական ծրագրերը, հստակեցվել ժամաքանակները, ուսումնասիրվել և օգտագործվել է ՀՀ պետական բուհերի այդօրինակ փորձը: Դասընթացների կազմակերպումը Միջազգային կրթական կենտրոնից փոխանցվել է Մինչհամալսարանական կրթության վարչության դիմորդների հետ տարվող աշխատանքների բաժնին:

## VIII. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ

### ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

*Ապահովել Համալսարանի ֆինանսական կայուն և բազմազանեցված հոսքերը և բարձրացնել դրանց կառավարման արդյունավետությունը: Բարելավել Համալսարանի կառավարման համակարգը և նպաստել դրա արդյունավետության և թափանցիկության բարձրացմանը՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը:*

Ռազմավարական 8-րդ՝ «Ֆինանսական կայունություն, արդյունավետ կառավարում» նպատակի **8.1. խնդրով** սահմանված է. «*Ապահովել Համալսարանի ֆինանսական միջոցների անհրաժեշտ ներհոսքը՝ բազմազանեցնելով դրանց աղբյուրները և մեծացնելով ծավալները*»: Խնդրի իրագործման նպատակով կատարվել են նախատեսված մի շարք գործողություններ:

Խնդրի *1-ին գործողությամբ* նախատեսված է. «*Նպաստել Համալսարանի պետական ֆինանսավորման ծավալների մեծացմանը՝ գիտակրթական ծրագրերին մասնակցության ընդլայնման միջոցով*»: Այս կապակցությամբ, կրթական ծրագրերի շրջանակներում մեկ ուսանողի հաշվարկով ուսման վարձի փոխհատուցման նպաստի պետական ֆինանսավորումը 2015 թվականի համեմատ ավելացել է 16440 ՀՀ դրամով կամ 2.6 %-ով. այն 2016 թվականին կազմում է 651000 ՀՀ դրամ ԵՊՀ-ում բոլոր մասնագիտություններում սովորող ուսանողների համար: Հաշվի առնելով վերոնշյալը՝ պետական ֆինանսավորումը 2016թ. նախորդ տարվա համեմատ կավելանա մոտ 38 միլիոն դրամով:



Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. *«Յուրաքանչյուր տարի վերանայել ուսման վարձավճարները՝ ըստ մասնագիտությունների և կրթական աստիճանների՝ պայմանավորված շուկայական գործոններով»*: Այս ուղղությամբ կատարվել է հետևյալը. պայմանավորված շուկայական գործոններով, ըստ մասնագիտությունների և կրթական աստիճանների բոլոր մասնագիտությունների գծով 2016/2017 ուսումնական տարվա ուսման վարձավճարները բարձրացվել են 7.5-9.0 %-ի չափով: Ուսման վարձավճարների նախորդ վերանայումը եղել է 2013 թ-ին:

Նշված խնդրի 3-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ակտիվացնել Համալսարանի մասնակցությունը կրթական և գիտահետազոտական տեղական և միջազգային դրամաշնորհային ծրագրերին»*: Ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլանով նախատեսված է այս գործողությունն իրականացնել շարունակաբար՝ մինչև 2020 թ.: Քննարկվող ժամանակահատվածին վերաբերող տվյալներով՝ կրթական, գիտահետազոտական տեղական և միջազգային դրամաշնորհային ծրագրերի դրամական հոսքերի մուտքերը 2015 թվականի համեմատ ավելացել են շուրջ 7 %-ով: Դա պայմանավորված է Համաշխարհային բանկի «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում ԵՊՀ-ում Մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոնի ստեղծման նպատակով թիվ 6/15-CIF դրամաշնորհային ծրագրի ավելացմամբ:

Խնդիր 8.1-ի 4-րդ գործողությամբ թեև նախատեսված է *ընդլայնել և կանոնակարգել ԵՊՀ վճարովի ծառայությունները*, սակայն 2016 թվականին նոր վճարովի ծառայություններ նախորդ տարվա համե-

մատ չեն ավելացել, ինչի պատճառով ֆինանսական հոսքերի ավելացմանը նպաստելու է միայն գործող ծառայությունների գնի ավելացումը, ինչը էական գումար չի կազմում:

Խնդրի 5-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ապահովել շրջանավարտների և այլ շահառուների հետ Համալսարանի և նրա առանձին ստորաբաժանումների շարունակական կապը՝ խրախուսելով նրանց կողմից Համալսարանին ֆինանսական, նյութական և այլ բնույթի աջակցության նախաձեռնությունները»*: Հաշվետու ժամանակաշրջանում ԵՊՀ շրջանավարտների և այլ շահառուների կողմից ֆինանսական, նյութական և այլ բնույթի աջակցություններից են հանդիսացել Դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի նորոգման նպատակով հատկացված 4272000 ՀՀ դրամը, գրադարանի կարիքների համար «Մարգիս և Մարի Իզմիրլյան» հիմնադրամի կողմից հատկացված 8405000 ՀՀ դրամը, լաբորատոր սարքավորումների վերազինման նպատակով «Հայկական բարեգործական ընդհանուր միություն» հիմնադրամի կողմից տրամադրված 14261700 ՀՀ դրամի սարքավորումները, «Գրանդ Քենդի» ընկերության կողմից անհատույց նվիրաբերված 1000000 ՀՀ դրամը:

*Խնդիր 8.2-ով սահմանված է. «Զարգացնել Համալսարանի ֆինանսական պլանավորման համակարգը, բարձրացնել ֆինանսական և նյութական ռեսուրսների կառավարման արդյունավետությունը»*:

Խնդրի 1-ին գործողության ուղղությամբ, որը վերաբերում է *ռիսկերի կառավարման համակարգի ներդրմանը*, դեռևս գործառույթներ չեն իրականացվել:

Խնդրի իրագործմանն ուղղված *2-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Զարգացնել ֆինանսական ոլորտի հաշվառման տեղեկատվական ցանցային համակարգը՝ ֆինանսական և նյութական ռեսուրսների կառավարման օպերատիվության ու արդյունավետության ապահովման նպատակով»*: Այս առումով, ներդրվել և կիրառվում է «Հայկական ծրագրեր, 6-րդ տարբերակ» հաշվապահական ծրագիրը, որով ձևակերպվում և գրանցումներ են ստանում բոլոր ֆինանսական գործառույթները: Ներդրվել և կիրառվում է «Հայկական ծրագրեր-Ձեռնարկություն» ծրագիրը, որը համատեղ շահագործում են ԵՊՀ հաշվապահությունը և կադրերի բաժինը: Ծրագիրն ապահովում է ԵՊՀ բոլոր աշխատողների, նրանց վերաբերյալ հրամանների, աշխատավարձերի, արձակուրդների, վերջնահաշվարկների, աշխատաժամանակի հաշվարկման տեղեկագրերի հաշվառումները: Ներդրվել և փորձարկման փուլում է «Ուսանող» ծրագիրը, որը շահագործվելու է ԵՊՀ հաշվապահության և ուսումնամեթոդական վարչության կողմից: Ծրագիրը ապահովելու է ուսանողների, ուսման վարձավճարների պարտքերի և հավելավճարների, վճարման ժամկետների, զեղչերի հաշվառումը:

Խնդիր 8.2-ի *3-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Օպտիմալացնել և վերապատրաստել ֆինանսական կառավարմանն առնչվող ստորաբաժանումների կազմը»*: Այս ուղղությամբ, Համալսարանի ֆինանսական գործառույթներ իրականացնող ԵՊՀ հաշվապահության, կադրերի բաժնի և գնումների պլանավորման և պահեստավորման վարչության աշխատակիցների համար 2016 թվականին սկսվել են վերապատրաստման դասընթացներ երեք փուլով՝ նախնական գիտելիքների թեստավորում, մասնագիտական գործունեության վերաբերյալ

դասընթացներ և ամփոփիչ քննություններ, ուղեցույց՝ պրակտիկ գործառույթների վերաբերյալ: Վերապատրաստման դասընթացները նախատեսվում է ավարտել 2016-ի տարեվերջին:

Ռեսուրսախնայողության համակարգի ներդրման ուղղությամբ, ինչը նախատեսված է *4-րդ գործողությամբ*, դեռևս գործառույթներ չեն իրականացվել:

***Խնդիր 8.3-ով նախատեսված է. «Կատարելագործել Համալսարանի իրավական դաշտը և կառավարման համակարգը»:***

Այս խնդրի իրագործման համար պլանավորված 9 գործողություններից 6-ն ընթացք են ստացել: Մասնավորապես՝ որոշակի աշխատանք է իրականացվել *1-ին գործողության* ուղղությամբ, որով նախատեսված է. *«Օպտիմալացնել Համալսարանի կազմակերպական կառուցվածքը, բարձրացնել ստորաբաժանումների գործունեության արդյունավետությունը և հաշվետվողականությունը»:*

*2-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Մշակել ՀՀ բուհերի կազմակերպական-իրավական ձևի մասին օրենսդրական փոփոխությունների առաջարկությունների փաթեթ և ներկայացնել ՀՀ ԿԳՆ»:* Այս առումով, մշակվել և ԿԳՆ է ներկայացվել «Գիտակրթական հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի նախագիծ: Միաժամանակ, «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ բազմաթիվ առաջարկներ են ներկայացվել, կազմակերպվել են քննարկումներ:

Խնդիր 8.3-ի *4-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Ներքին իրավական ակտերը համապատասխանեցնել Համալսարանի նոր կանոնադրությանը»:* Այս առումով, սկսվել և նորմալ ռիթմով ընթանում է

ներքին իրավական ակտերը Համալսարանի նոր կանոնադրությանը համապատասխանեցնելու գործընթացը: Մասնավորապես՝ վերանայվել, մշակվել և ԵՊՀ գիտական խորհրդի կողմից հաստատվել են հետևյալ փաստաթղթերը.

- Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի բաժնի կանոնադրությունը (2016թ. մարտի 31-ի թիվ 6 նիստ, որոշում 6/3),
- Երևանի պետական համալսարանի ֆակուլտետի դեկանի ընտրության ընթացակարգը (նոր խմբագրությամբ) (2016 թ. մայիսի 26-ի թիվ 7 նիստ, որոշում 7/5)
- Երևանի պետական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգը (նոր խմբագրությամբ) (2016թ. մայիսի 26-ի թիվ 7 նիստ, որոշում 7/6)
- Երևանի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական համակարգի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման կարգում փոփոխություններ և լրացում կատարելու մասին որոշումը (2016 թ. մայիսի 26-ի թիվ 7 նիստ, որոշում 7/7):

Խնդրի *8-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Զարգացնել Համալսարանի տեղեկատվական համակարգերը»*: Այս ուղղությամբ կատարվել է շոշափելի աշխատանք: Մշակվել և ներդրվել է «ԵՊՀ աշխատակիցների համացանցային ներքին տիրույթը» (Համալսարանի ինտրանետ համակարգը), որի նպատակն է ավտոմատացնել և առավել արդյունավետ դարձնել ԵՊՀ տեղեկատվության փոխանակման հոսքերը, հաշվետվողականության գործընթացները, աջակցել ԵՊՀ միասնական

տեղեկատվական համակարգի ձևավորմանը: Հարստացվել է ԵՊՀ պորտալը: Կայքում լրացվել են դասախոսների և ուսանողների էջերը:

Նշված խնդրի *9-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Բարձրացնել սովորողների ներգրավվածության արդյունավետությունը համալսարանական կառավարման գործընթացներում»*: Այս գործողության իրականացման նպատակով ԵՊՀ և ֆակուլտետային գիտական խորհուրդներում ընդգրկված ուսանողների հետ պարբերաբար իրականացվում են համապատասխան թեմաներով թրեյնինգներ:

*Խնդիր 8.4*-ով սահմանված է. *«Ապահովել համալսարանական գործընթացների թափանցիկությունը՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը»*: Խնդրի իրագործմանն ուղղված *2-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Մեծացնել ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի թափանցիկությունը, բարձրացնել կիրառվող գնահատման համակարգի, չափանիշների և ընթացակարգերի վերաբերյալ ուսանողների իրազեկվածության մակարդակը»*: Այս գործընթացն անընդհատ է և գտնվում է ԵՊՀ ղեկավար մարմինների մշտական ուշադրության կենտրոնում:

Խնդրի *3-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Բարձրացնել աշխատողների իրազեկվածության մակարդակը համալսարանական գործընթացների վերաբերյալ, մեծացնել հրապարակայնությունն ու թափանցիկությունը Համալսարանի կառավարման համակարգում»*: Այս ուղղությամբ նույնպես իրականացվում է շարունակական աշխատանք:

Որոշակի քայլեր են ձեռնարկվել «Համալսարանի աշխատողների և ուսանողների էթիկայի կանոնակարգ» մշակելու և գործածության մեջ դնելու ուղղությամբ, ինչը նախատեսված է *4-րդ գործողությամբ*:

## IX. ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ ԵՎ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

*Խթանել միջազգայնացման շարունակական գործընթացները ինստիտուցիոնալ և ծրագրային մակարդակներում:*

Ռեզոլուցիայի 9-րդ՝ «Միջազգայնացում և գործակցություն» նպատակի իրագործման համար նախատեսված է իրականացնել 2 խնդիր՝ համապատասխանաբար 6 և 4 գործողություններով:

*Խնդիր 9.1-ով սահմանված է. «Զարգացնել Համալսարանի միջազգայնացմանը նպաստող քաղաքականությունը», որի իրագործման համար 1-ին գործողությամբ նախատեսված է. «Մշակել միջազգայնացման հայեցակարգ»: Փաստաթղթի նախագիծը մշակվել է և գտնվում է ԵՊՀ գիտխորհրդի քննարկման և հաստատման փուլում:*

*2-րդ գործողությամբ համապատասխան՝ արդեն մշակված են նաև միջազգայնացման գործընթացների գնահատման առանցքային ցուցանիշները, և նախատեսվում է 2017 թ. փետրվար-մարտ ամիսներին անցկացնել համեմատական վերլուծություն (բենչմարքինգ):*

*3-րդ գործողությամբ նախատեսված է. «Հստակեցնել միջազգայնացման դերակատարների գործառույթները կառուցվածքային տարբեր մակարդակներում, սահմանել և կիրարկել նրանց խրախուսման մեխանիզմները»: Այս գործողության իրականացման համար Ժամանակացույց-պլանով նախատեսված է 2 ժամկետ, որի 1-ին մասով (01-12.2016 թ.) աշխատանքներն իրականացվել են: Ըստ այդմ՝ միջազգայնացման դերակատարների գործառույթները կապված են ԵՊՀ միջազգայնացման քաղաքականության հետ: Այս առումով, Համալսարանի*

տարբեր կառույցներից առաջադրվել են աշխատողներ, ովքեր հանձն են առել համագործակցել Միջազգային համագործակցության վարչության հետ: Մասնավորապես՝ ֆակուլտետները քննարկել, մշակել և ներկայացրել են առաջարկներ՝ գործընկեր բուհերի հետ աշխատանքային ծրագրեր ստեղծելու համար: Ձևավորվել և գործում է միջազգայնացման աշխատանքների համար պատասխանատու փոխդեկանների ինստիտուտը: Նրանք պատասխանատու են նաև ֆակուլտետի մակարդակով համապատասխան տեղեկատվության (դրամաշնորհային և փոխանակման ծրագրերի վերաբերյալ) տարածման համար:

Նույն ուղղությամբ աշխատանք է տարվել նաև ԵՊՀ ՈւԳԸ-ի հետ, որը հանդես է գալիս որպես տեղեկատվության փոխանցող:

ԵՊՀ գործընկեր բուհերից առավել ակտիվ է համագործակցությունը Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի, Քուվեյթի, Կահիրեի, Լիլի, Մոնպելյե 3, Էքս ան Պրովանսի, Մասաչուսեթսի, Պավիայի, Լ՛Օրիենտալե, Կա Ֆոսկարի, Բոլոնիայի և մի շարք այլ համալսարանների հետ: Գործընկերների ցանկում են նաև ՀՀ-ում գործող միջազգային կառույցներ՝ DAAD, USAID, IREX և այլն: Համալսարանի շրջանակում Միջազգային համագործակցության վարչությունը համագործակցում է ֆակուլտետների, Որակի ապահովման կենտրոնի, Գիտակազմակերպական վարչության, Ուսումնամեթոդական վարչության, գրադարանի հետ:

Խնդիր 9.1-ի 4-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ստեղծել միջազգայնացման աջակցության համացանցային պորտալ և վիրտուալ պլատֆորմ»*: Այս ուղղությամբ, INET դրամաշնորհային ծրագրի շրջանակում ստեղծվել է int-net.org միջազգայնացման վիրտուալ պլատ-



Ֆորմը, որտեղ տրամադրվում է տեղեկատվություն միջազգայնացմանն առնչվող տարբեր ուղղությունների՝ հետազոտության, միջազգային փոխանակումների և միջազգային ծրագրերին մասնակցության համար տարբեր ֆինանսական հնարավորությունների վերաբերյալ:

Խնդրի *5-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Իրականացնել միջազգայնացման ոլորտում ներգրավված աշխատողների վերապատրաստում»*: Այս ուղղությամբ, դարձյալ INET դրամաշնորհային ծրագրի շրջանակում, մշակվել է միջազգայնացման վերաբերյալ խնդիրների վերապատրաստման փաթեթը, որի շրջանակում 2016 թ-ից սկսվել է ֆակուլտետների պրոֆեսորադասախոսական կազմի, ասպիրանտների, ուսանողների վերապատրաստման գործընթացը:

*6-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Ստեղծել հրավիրյալ պրոֆեսորի ինստիտուտ»*: 2015/2016 ուստարում ԵՊՀ-ն ընդունել է 4 հրավիրյալ պրոֆեսորի և մի քանի տասնյակ արտասահմանցի գործընկեր մասնագետների, որոնք հանդես են եկել դասախոսություններով և իրականացրել են հետազոտական աշխատանքներ: Անց է կացվել պիլոտային ծրագիր, որի արդյունքների հիման վրա կիրականացվի այցելու պրոֆեսորների ինստիտուտի գնահատման հետագա գործընթացը:

*Խնդիր 9.2-ով* նախատեսված է. *«Զարգացնել միջազգայնացման գործընթացները կրթական ոլորտում»*:

Խնդրի *2-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Զարգացնել և ընդլայնել ամառային կրթական, մշակութային և ճանաչողական ծրագրերը»*: Այս ուղղությամբ, ՀՀ սփյուռքի նախարարությունը և ԵՊՀ հայագի-

տական հետազոտությունների ինստիտուտը համատեղ կազմակերպել են «Սփյուռք» ամսոային դպրոցը:

Նշված խնդրի *3-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Աշխատողների և սովորողների շրջանում բարձրացնել շարժունության ծրագրերի մասին իրազեկվածության աստիճանը: Խթանել ներգնա և արտագնա շարժունությունը»*: Այս տեսակետից, 2015/2016 ուստարում «Էրազմուս+» ծրագրի շրջանակում ԵՊՀ-ն համագործակցել է արտերկրի բազմաթիվ համալսարանների հետ, որոնց հետ իրականացրել է նաև փոխանակման ծրագրեր: Նշված ժամանակահատվածում արտասահման են գործուղվել ԵՊՀ 234 մասնագետ, 175 ուսանող և ասպիրանտ:

Խնդիր 9.2-ի *4-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Զարգացնել օտարերկրյա բուհերի հետ համագործակցությունը՝ կրկնակի դիպլոմով համատեղ մագիստրոսական ծրագրերի իրականացման ուղղությամբ»*: Այս առումով, ԵՊՀ-ում իրականացվում են կրկնակի դիպլոմով ծրագրեր ԱՊՀ երկրների ցանցային համալսարանի շրջանակներում (միջազգային հարաբերությունների, իրավագիտության, ռուս բանասիրության, ինֆորմատիկայի, տնտեսագիտության, կառավարման, զբոսաշրջության բնագավառներում):